ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ Լ. Մ.

Ձայնավորների ներդաշնակությունը փոխազդեցական կամ դիրքային հնչյունափոխության դրսևորումներից մեկն է, ձայնավորների առնմանության մի տեսակ, որ բնորոշ է հիմնականում թուրքական, մոնղոլական, ուգրո-ֆիննական, տունգուս-մանջուրական և հինասիական մի շարք լեզուների: Դա բառի կամ բառաձևի մասնիկների՝ ձայնավորների տարածական (ոչ կից) նմանությունն է (дистактная ассимиляция) արմատի ձայնավորին: Ընդ որում, այդ ձայնավորները միմյանցից բաժանված են լինում այլ հնչյուններով և պատկանում են ինչպես միևնույն վանկին, այնպես էլ տարբեր վանկերի[1]:

Հնչյունափոխական այս իրողության էությունն այն է, որ բառի կամ բառաձևի քերականական մասնիկի ձայնավորի բնույթը պայմանավորվում է սովորաբար արմատի ձայնավորի տեսակով:

Ձայնավորների ներդաշնակության դեպքում տարբերակում են նաև *ծանր և թեթև* ձայնավորներ: Եթե բառարմատի ձայնավորը հետնալեզվային է կամ միջնալեզվային (*ծանր* ձայնավոր), ապա բառին ավելացվող մասնիկի ձայնավորն էլ պետք է լինի այդ կարգի:

Այն լեզուները, որոնց հատուկ է ձայնավորների ներդաշնակությունը, կոչվում են սինհարմոնիկ լեզուներ, ինչպես գերմաներենը, ֆրանսերենը, իսպաներենը, իտալերենը, լատիներենը և այլն[2]:

Լեզվաբանական գրականության մեջ նշվում է, որ հայերենում առհասարակ ձայնավորների ներդաշնակության օրենքը չկա, թեև միաժամանակ նկատել են, որ այդ երևույթը լայն տարածում ունի հայերենի մի շարք բարբառներում, ինչպես՝ Ագուլիս, Մարաղա, Կիլիկիա, Մեղրի, Կարճևան, Բուրդուր, Կեսարիա, Մոկս, Զեյթուն, Վան, Սուչավա և այլն[3]:

---

[1] **Ахманова О. С.,** *Словарь лингвистических терминов, М., 1969, с. 57.*

[2] **Головин Б. Н.,** *Введение в языкознание, М., 1973, с. 63.*

[3] **Պետրոսյան Հ.**, Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 431-432: Հայերենի բարբառներում ձայնավորների ներդաշնակության երևույթը գործում է բառակազմական և քերականական ձևույթների արտահայտության պլանում: Ձայնավորների ներդաշնակությունը պայմանավորված է ուժեղ հնչյունների ազդեցությամբ: Ուժեղ հնչյուն է համարվում *ու* ձայնավորը: Հմմտ. կճուճ-կուճուճ, այգուց-ուգուց, ջուր-ջուրուտ, լույս-լիսավուր, գլուխ-գըլխավուր (Մեղրի), պռունկ-պուռունկ, ճնճղուկ-ճունջուղ, (Մարաղա), ձուկն-ձուկուն (Կարճևան), ուղեղ-ուղուղ, եղունգն-ուղունգ (Բուրդուր), կկու-գուգուք (Կեսարիա), թթու-թութու (Պոլիս), ուղիղ-ուղուրթ (Մոկս) և այլն: Մյուս ձայնավորները քիչ հաճախականություն ունեն. հմմտ. (Ի). բլիթ-բիլիթ, բրինձ-բիրինձ (Կաքավաբերդ), չամիչ-չիմիչ (Կարճևան), (Օ). խելոք-խօլոք (Բուրդուր), անոթի-օնօթի (Հաշտեն), (Ա). ճերմակ-ճարմակ (Զուղա), երազ-արազ (Ագուլիս) և այլն: Որոշ բարբառներում սեռական հոլովի ցուցիչը կամ որոշյալ ու անորոշ հոդերը համապատասխանում են բառի վերջնավանկի ձայնավորին: Հմմտ. սեռական հոլովի դրսևորումները Մարաղայի բարբառում. Անդուն-

Նշված հնդեվրոպական լեզուներում և հայերենի բարբառներում իսկապես լայն տարածում ունեցող լեզվական այս իրողությունը խորհելու առիթ է տալիս. իրո՞ք հայերենում չկա կամ չի գործել ձայնավորների ներդաշնակության օրենքը, կամ նրա զարգացման որևէ գոյավիճակում արդյոք չե՞ն պահպանվել այդ իրողության հետքերը։

Գրաբարի հնչյունական համակարգի համաժամանակյա քննությունը վերհանում է հնչյունափոխական որոշակի իրողություններ, որոնք ստիպում են վերանայել այդ մարզում եղած ավանդական որոշ ըմբռնումներ։ Խոսքը մասնավորապես վերաբերում է հին հայերենի հոլովման և խոնարհման որոշ ձևերում գործող ձայնավոր հնչյունների ներդաշնակության երևույթին, որ տեղի է ունենում ուժեղ ձայնավորների ազդեցության հետևանքով. իրողություն, որ գործում է գոյականի հոգնակի թվի և բայի խոնարհման համակարգի որոշ ձևերում։

1. Քննենք ձայնավորների ներդաշնակության օրենքը *գոյականի թվի քերականական կարգում*։ Թվակազմության ժամանակ այն գործում է գոյականական բառույթի վերջնավանկի և նրա հոգնակիակերտ մասնիկների ձայնավորների միջև։ Դիտարկենք այդ երևույթը՝ ըստ համապատասխան ձայնավորների փոխազդեցության գործոնի։

Լեզվական փաստերը ցույց են տալիս, որ գրաբարում ներդաշնակության օրենքը գործում է ու, ա, ի ձայնավորների ազդեցության տիրույթներում։ Այս հնչյունները, ըստ գործառական ոլորտների բնույթի, բաժանվում են մենոլորտ և տարոլորտ տեսակների։ *Մենոլորտ* հնչույթները գործառում են միայն հնչույթների մի կարգին հատուկ ոլորտում, օրինակ՝ ա հնչույթը կարող է լինել միայն ձայնավորներին հատուկ ոլորտում։ Տարոլորտ հնչույթները կարող են հանդես գալ տարբեր կարգի հնչույթներին հատուկ ոլորտներում, ինչպես ու և ի հնչույթները. ու հնչույթը կարող է հանդես գալ թե՛ ձայնավորների ոլորտում, իբրև վանկարար ու, և թե՛ բաղաձայնական ոլորտում, իբրև բաղաձայն վ։ Ի-ն կարող է հանդես գալ թե՛ ձայնավորական ոլորտում և թե՛ ձայնորդային ոլորտում, իբրև վանկաբնի անդամ (երկբարբառի կամ եռաբարբառի բաղադրիչ)։ Նշանակում է՝ դասական գրաբարի ու և ի ձայնավորները տարոլորտ հնչույթներ են[4]։

Գրաբարում ձայնավորները փոխազդեցական-նմանեցման հատկություն ունեն այն դիրքերում, երբ կազմում են, այսպես կոչված, *ձայնավորական ոլորտը։* Դասական գրաբարի ձայնավորական ոլորտն են կազմում այն բոլոր դիրքերն ու կապակցությունները, որոնց մեջ հնչույթը վանկարար դեր ունի։ Այս ոլորտը կոչվում է *զագաթնային։*

Անդունու, Հարթիւն-Հարթիւնիւ, Նարգյիզ-Նարգյիզի, Միսակ-Միսակա և այլն։ Հմմտ. Կիլիկիայի բարբառի Մարաշի ենթաբարբառի մեջ որոշյալ (ը) և անորոշ (մը) հոդերի դրսևորումները. ախշինի (աղջիկը), մուգու (մուկը), խիւդիւ (խոտը), ախշին մի (աղջիկ մը), մուգ մու (մուկ մը), խիւդ միւ (խոտ մը) (տե՛ս **Աճառյան Հր.**, Հայ բարբառագիտություն, Մոսկուա-Նոր-Նախիջեւան, 1911, **Ղարիբյան Ա.**, Հայ բարբառագիտություն, Ե.,1953 և այլն)։ Երևույթի քննությունը տե՛ս **Բաղրամյան Ռ.**, Ձայնավորների ներդաշնակության օրենքը բարբառներում (ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հաս. գիտ., 1964, N 12)։

[4] **Աղայան Է.**,Գրաբարի քերականություն, հ. Ա, Ե., 1964, էջ 212-213։

Ս. Տրուբեցկոյը հնչութաբանական տեսակետից տարբերում է երկու կարգի դիրք. *չեզոքացման դիրք* և *ուժեղության դիրք*: Նրա հետևողությամբ էլ հնչութաբանական գրականության մեջ տարբերակում են երկու կարգի դիրքեր. *թույլ կամ չեզոք և ուժեղ կամ հնչութային*[5]:

Գագաթնային դիրքում հանդես եկող ու ձայնավորը ուժեղ հնչույթ է: Դասական հայերենում գոյականական բազմաթիվ բառույթներ, որոնց արմատի կամ վերջնավանկի ձայնավորը գագաթնային ու հնչույթն է, հոգնակի թվում ստանում են այնպիսի (ընդհանուր) մասնիկ, որի վանկարար հնչույթի դերում հանդես է գալիս ու ձայնավորը՝ որպես ներդաշնակության երևույթի դրսևորում:

Այդ կարգի բառերը գրաբարում, ըստ վանկերի քանակի, բաժանվում են չորս խմբի:

1. *Մեկվանկանի բառեր.* բառավերջում չունեն ն ձայնորդ: Այն հանգամանքը, որ դրանց հոգնակին կազմվում է –մունք մասնիկով, ցույց է տալիս, որ երբևէ ունեցել են ն ձայնորդը, որը ժամանակի ընթացքում թույլ արտասանվելու հետևանքով ընկել է, և նրանց հոգնակին կազմվում է ն ձայնորդով վերջացող բառերի թվակազմության համաբանությամբ: Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է այդ բառերի արմատի և քերականական մասնիկի ձայնավորների ներդաշնակությունը:

Հմմտ. թումբ - թմբունք	լուծ – լծունք	խուրձ – խրձունք
խութ-խթունք	ձունձ-ձնձունք	քուրձ-քրձունք

Գրաբարում *խուփ, կրունկ, սունկ* և այլ բառեր հանդիպում են թե՛ ն ձայնորդով, թե՛ առանց դրա: Երկու դեպքում էլ այդ բառերի հոգնակին կազմվում է -մունք մասնիկով. հմմտ. *խփունք, կրնկունք, սնկունք* և այլն:

2. *Մեկնկեսվանկանի բառեր.* վերջանում են ն ձայնորդով, հոգնակին կազմում են –մունք հոգնակերտով:

Հմմտ. ակն (աղբյուր) - ակունք	բուռն - բռունք	բուրգն - բրգունք
գուղձն - գղձունք	դուռն - դրունք	դուրգն - դրգունք
ձուկն - ձկունք	մուկն - մկունք	նուռն - նռունք
շուրթն - շրթունք	ունկն - ընկունք	ռունգն - ռնգունք

3. *Երկվանկ բառեր.* համեմատաբար քիչ են գրաբարի բառային կազմում: Հանդիպում են բառեր, որոնք վերջանում են ն ձայնորդով, ինչպես, *ելունդն* կամ *եղունդն - ելնդունք, եղնդունք, եղունգն -եղնգունք*: Որոշ բառեր էլ բառավերջում չունեն ն ձայնորդ և հոգնակին կազմում են համաբանության օրենքով: Հմմտ. խցիկ - խցկունք, մանուկ – մանկունք, նուազ - նուազունք, պուտուկ-պտկունք: *Խցիկ* և *մանուկ* գոյականները երբևէ ունեցել են ն ձայնորդ. դրա վկայությունն է նրանց սեռական հոլովի կազմությունը. *խցկան* (նաև՝ *խցկի*) և *մանկան*, իսկ *պուտուկ* և

[5] Նույն տեղում, էջ 217:

նուազ բառերը սեռականում ստանում են ի վերջադրական հոլովիչ. *պտկի*, *նուազի*. հետևաբար նրանք էլ հոգնակին կազմում են համաբանության օրենքով։

4. *Բազմավանկ բառեր.* այս բառերն ունեն ձևական ընդհանրություն, վերջանում են –ումն ածանցով (հնչյունախմբով)։ Այդ հնչյունախմբի զագաթնային ուժեղ ու ձայնավորի ազդեցությամբ հոգնակերտ մասնիկի վանկարարի դերում հանդես է գալիս նույնպես ու հնչույթը։ Այդ կարգի բառերն զգալի տոկոս են կազմում գրաբարի բառային կազմում։ Ըստ ՆՀԲ-ի[6] տվյալների, դրանց թիվը հասնում է շուրջ երկու հարյուր հիսունի։ Ընդ որում, ՆՀԲ-ն որոշ դեպքերում նշում է դրանց հոգնակիի ձևերը՝ (-մունք) քերականական մասնիկով, որոշ դեպքերում չի նշում, սակայն բնագրային վկայություններում դրանց մի մասը հանդիպում է հոգնակերտ –մունք մասնիկով։ Այդ բառերի մի մասն էլ հոգնակի կիրառությամբ չի հանդիպում, սակայն բառապատկերի պահպանման, ինչպես նաև համաբանության օրենքով ՆՀԲ-ն դրանք զետեղում է հոգնակին –մունք մասնիկով կազմող բառերի շարքը։

Ահա այդ բառերի ամբողջական ցանկը[7].

ազդումն*	գարշումն*	զարթումն
ածումն	գերաճումն*	զարհուրումն*
աճեցումն	գողումն*	զեղումն*
անկումն*	գովումն	զերծումն*
առաքումն	գրաւումն	զմայլումն
առումն	դադարումն*	զննումն
արարումն*	դանդաղումն*	զտումն
արձակումն	դաշնակումն	ըղձումն
բաժանումն	դարձումն*	ըմբռնումն
բացումն	դեգերումն	թախանձումն
բերումն*	դողումն*	թաղկումն
բեւեռումն	եղծումն*	թաւալումն*
բոլորումն*	եռումն	թափառումն
բողոքումն	երերում	թափումն
բորբոքումն*	երեւումն	թմբրումն
բուժումն*	երկբայումն	ժամանումն
բուծումն*	զանազանումն*	ժպտումն
բուսումն*	զանգիտումն	իջումն
բուրումն*	զատումն*	լրումն
գանումն*	զարդարումն	խաբումն*
խայթումն*	հաւաստումն	յանցումն*

[6] Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա-Բ, Վենետիկ, 1836-1837։

[7] Աստղանիշով տրվում են այն բառերը, որոնց հոգնակին ՆՀԲ-ն նշում է։

խայտումն
խանգարումն
խազումն
խառնումն
խաւարումն
խափանումն
խեղկումն
խիզախումն
խլրտումն*
խնդումն
խոկումն*
խոհումն
խոնարհումն*
խոնջումն
խոշտանգումն
խոպանացումն
խոստումն
խոտորումն
խուզումն
խուսափումն
խտղտումն
ծագումն
ծալումն
ծածկումն
ծաւալումն
ծորումն
կականումն
կակղումն
կայծակումն*
կապումն
կատաղումն
կափկափումն
կիզումն*
կոչումն*
կոտորումն
կոճումն
կցումն
հառաչումն
հասումն
հաստատումն
հեծումն
հեղգումն
հեղեղումն
հեղուսումն
հեգնումն
հեռացումն
հեստումն
հետեւումն
հերձումն
հիացումն*
հիւծումն
հիւսումն
հնչումն*
հոլովումն*
հոսումն
հռչակումն
հրաժարումն
հրասուզումն
հրոսումն
ձաղումն
ձեղումն
ճանաչումն
ճաշակումն
ճապաղումն*
ճարակումն
ճգնումն
ճենճերումն*
ճեպումն
ճղփումն
ճնշումն
ճողքումն
ճչումն
մաշումն
մաքառումն
մաքրումն
մերժումն
միտումն
մոլորումն
մրցումն*
յածումն
յապաղումն
յաջողումն
յատումն
յարգումն
յարձակումն
յիշումն
յօդումն
ներվարժումն*
նկատումն
նկարումն
նորոգումն
շառաչումն
շարժումն
շարումն
շփոթումն
շփումն
ոլորումն
ոստումն
ոստոստումն
ուսումն*
որոճումն
որոտումն*
պակասումն
պաշտումն*
պապակումն
պարարումն
պարծումն
պսակումն
ջախջախումն
ջեռումն
սերումն
սլացումն
սղոցումն
ստեղծումն
սփոփումն
սփռումն
սքանչումն*
վառումն
վատնումն
վերացումն

հարկանումն	յաղթումն	վիժումն
հարցումն	յամարումն	վրիպումն
հաւանումն	յանգումն	տանջումն
տատանումն	տրփումն	ցրուումն
տարակուսումն	ցանկումն	փայլատակումն*
տարալուծումն	ցանումն	փայլումն
տեսումն	ցասումն	փեռեկումն
տեւումն	ցելումն	փետումն
տռփումն	ցոլումն	քայքայումն
տրորումն	ցոլումն	քարշումն
տարփումն	ցուցումն*	օտարուսումն*

Մեր ուսումնասիրության նպատակից դուրս համարելով այս կարգի բառերի ձևաիմաստային քննությունը՝ այնուամենայնիվ, նկատենք, որ գրաբարում.

1. –Ումն հնչյունախումբը հիմնականում ավելանում է առաջին հիմքի վրա։

2. Հանդիպում են բառեր (բայանուններ), որոնք –ումն հնչյունախումբն ստանում են ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ (առրիստի) հիմքի վրա, ինչպես, *խորհումն – խորհեցումն, յագումն – յագեցումն, հարկանումն – հարումն, ցոլումն – ցոլացումն,* կամ էլ կազմվում են միայն երկրորդ հիմքից, ինչպես՝ *հատումն, հատուցումն*, *հարցումն, հեռացումն, հիացումն, սլացումն* և այլն։

3. Հանդիպում են նաև պարզ և ածանցավոր հիմքերով նույնարմատ կազմություններ, ինչպես՝ *խոցումն –խոցոտումն*, *բեկումն – բեկտումն*_և այլն։

4. Երբ այս կարգի բայանունների պատճառական կազմությունները –ումն հնչյունախումբն ստանում են երկրորդ հիմքի վրա, առաջանում են երկրորդ հիմքից կազմվող զուգահեռ ձևեր, ինչպես՝ *մեռումն – մեռուցումն, ելումն – ելուզումն, մածումն – մածուցումն, մատնումն (մատչիմ) – մատուցումն, ուսումն – ուսուցումն* և այլն։

Բոլոր դեպքերում այդ բառերի (բայանունների) հոգնակին կազմվում է -*մունք* մասնիկով. որտեղ ու ձայնավորի ներդաշնակության օրենքը գործում է անխտիր։

Ինչպես նկատեցինք, -ումն հնչյունախմբով վերջացող բառերը բայանուններ են, որոնց մի մասը, պայմանավորված բայիմաստի առարկայացված գործողության հանգամանքով, կարող է հոգնակի թիվ չստանալ։ Անշուշտ, մեր բերած բառացանկում կարող են հանդիպել այդպիսի բայանուններ, սակայն ներքոհիշյալ բայանունները, մեր կարծիքով, չունեն հոգնակի թիվ, և եթե նրանց հավանական հոգնակի թվում կարելի է վերագրել –մունք մասնիկ, ապա դա արվում է միայն տրամաբանորեն և թվակազմության համաբանությամբ, ինչպես՝ *խօսումն, խիթումն, ծագումըն, ծալումն, ծափումն, ծածանումն, ծածկումն, կախումն, կոտորումըն, կորզումն, կրկնումն* և այլն։ Բերված օրինակները աներկբա կերպով ցույց են տալիս, որ գոյականի թվի քերականական կարգում գործում է ու ձայնավորի ներդաշնակության օրենքը։

Գրաբարում նվազ հաճախականությամբ գործում է նաև ա և ի ձայնավորների ներդաշնակության օրենքը, դարձյալ թվակազմության ժամանակ։

Հնչույթների գործառական ոլորտների մասին խոսելիս մենք նշեցինք, որ ա ձայնավորը մենոլորտ հնչույթ է, հանդես է գալիս միայն ձայնավորներին հատուկ ոլորտում և պահպանում է իր վանկարար դերը։ Ավելացնենք, որ մենոլորտ են նաև բոլոր երկբարբառներն ու եռաբարբառները։ Սրանք, իբրև ձայնավորների կամ ձայնավորների և ձայնորդների միաձույլ կապակցություններ, հանդես են գալիս քերականական մասնիկների կառուցվածքում։ Այս դեպքում ևս քերականական մասնիկի ձայնավորը ներդաշնակության օրենքով համապատասխանում է արմատի կամ նրա վերջնավանկի ձայնավորին։

Թվակազմության ժամանակ ա ձայնավորի ներդաշնակության օրենքը դիտարկելի է հետևյալ դեպքերում.

1. Երբ արմատի կամ նրա վերջնավանկի ձայնավորին համապատասխանող քերականական մասնիկի ձայնավորը հանդես է գալիս ձայնավորական ոլորտում, ինչպես՝ գրաստ-*ական*, գուսան-*ական*։

2. Երբ արմատի կամ նրա վերջնավանկի ձայնավորին համապատասխանող քերականական մասնիկի ձայնավորը հանդես է գալիս երկբարբառային կամ եռաբարբառային (ձայնավորներին հատուկ) ոլորտում, ինչպես՝ նախարար–*եան*, շաբաթ–*եան*, բան–*եար*, վան–*եար*, վարժ–*եար*, նաւակ–*նեար*, վան–*որայ*, արտ–*որեայ*, վան–*որեայք* և այլն։

Որոշ մեկնկեսվանկանի բառերի թվակազմության ժամանակ գործում է ի ձայնավորի ներդաշնակության օրենքը, երբ ի-ն հանդես է գալիս վանկարար հնչյունի դերով։ Հմմտ. քիրտն – քրտինք, քնին – քնինք, քմին (դարան) – քմինք։

Մյուս ձայնավորները գոյականի թվի քերականական կարգում ներ-դաշնակության օրենքի դրսևորումներ չունեն։

2. *Բայի խոնարհման համակարգում* ձայնավորների ներդաշնակության օրենքը գործում է բայական որոշ լծորդությունների և խոնարհման վերջավորությունների վանկարար ձայնավորների համապատասխանության ոլորտում։ Այդ երևույթը գործում է Ի և Ու լծորդական ձայնավորների ազդեցության ոլորտներում, որ հանդիպում է այդ լծորդության բայերի ստորադասական եղանակի առաջին ապառնի ժամանակում։ Անկախ լծորդությունից՝ այս ժամանակում բայերը կազմվում են եմ օժանդակ բայի առաջին ապառնիի ձևերից՝ *-իցեմ, -իցես, -իցէ, -իցեմք, -իցէք, -իցեն։*

Ի լծորդության բայերի խոնարհման ժամանակ տեղի է ունենում լծորդական ձայնավորի և օժանդակ բայի վերջնավանկ ձայնավորի առնմանություն. ձևութային վերլուծության միջոցով կարելի է վերականգնել հնչյունափոխական քայլերի հաջորդականությունը։

Կարելի է ասել, որ բայահիմքի և վերջավորության միջև նախ ավելանում է ի ձայնավորը, ինչպես՝ բազմիմ - *բազմ –ի –իցեմ, բազմ – ի–իցես, բազմ–ի–իցէ, բազմ–*

ի–իցեմք, բազմ–ի–իցէք, բազմ–ի–իցեն[8]: Կրկնակ ի ձայնավորներից մեկն ընկնում է, ունենում ենք *բազմիցեմ,_բազմիցես, բազմիցէ ...* բայաձևերը, այնուհետև *–իցեմ* միաձույլ վերջավորության վերջնավանկի ե ձայնավորը առնմանության օրենքով դառնում է ի, և բայաձևերն ստանում են հետևյալ կառուցվածքը՝ *բազմիցիմ, բազմիցես, բազմիցի* և այլն[9]: Այս երևույթն առանց բացառության գործել է ստորադասական եղանակի առաջին ապառնի ժամանակում՝ անկախ բայերի կազմությունից:

ՈՒ լծորդության բայերի խոնարհման վերջավորությունների վանկարար ձայնավորները ևս նույն ժամանակային ձևերում ենթարկվում են հնչյունափոխության՝ ներդաշնակելով լծորդական ձայնավորին:

Զևութային վերլուծության միջոցով նույնպես կարելի է վերականգնել հնչյունափոխական քայլերի հաջորդականությունը և ցույց տալ բայաձևերի կազմավորման գործընթացի պատկերը:

ՈՒ լծորդության բայերի հիմքի և առաջին ապառնիի վերջավորությունների միջև ավելանում է լծորդական ձայնավորը. բայաձևերը նախապես ունեցել են հետևյալ կառուցվածքը. կիզուլ –կիզ -ու- իցեմ, կիզ -ու–իցես, կիզ –ու իցէ և այլն: Այնուհետև ու ձայնավորի ազդեցությամբ իցեմ, իցես, իցէ, իցեմք, իցէք, իցեն ձևերի ի ձայնավորը առնմանության օրենքով դառնում է ու՝ ներդաշնակելով լծորդական ձայնավորին: Բառաձևերը կստանան հետևյալ պատկերը. *կիզու-ուցեմ, կիզու-ուցես, կիզու-ուցէ* և այլն: Կրկնակ ու ձայնավորներից մեկն ընկնում է. բառաձևերը ստանում են հետևյալ պատկերը. *կիզու-ցեմ, կիզու-ցես, կիզու-ցէ* և այլն: ՈՒ ձայնավորի առնմանության օրենքով վերջին հնչյունախմբերի ձայնավորները դառնում են ու՝ համապատասխանելով լծորդական ձայնավորին: Հետևաբար բայաձևերը կստանան հետևյալ կառուցվածքը՝ *կիզուցում, կիզուցուս, կիզուցու, կիզուցումք, կիզուցուք, կիզուցուն*[10]: Այս երևույթը առանց բացառության գործել է ստորադասական եղանակի առաջին ապառնի ժամանակում անկախ բայերի կազմությունից:

Այսպիսով.

---

[8] Հմմտ. Ա լծորդության բայերի կազմությունը. *խաղալ. խաղ -ա- իցեմ*, որից՝ *խաղայցեմ* (ի-յ հնչյունափոխությամբ):

[9] Հր. Աճառյանը, խոսելով Մարաղայի բարբառում ձայնավորների ներդաշնակության օրենքի մասին, գրում է, որ «մինչև իսկ էական բայը ենթակայ է այս նմանողական ձայնափոխութեանց», ինչպես Ի լծորդության բայերի լծորդական ձայնավորի ազդեցությամբ օժանդակ բայի *եմ, ես, է...* վերջավորությունները դառնում են *իմ, իս, ի* ... և այլն (**Աճառյան Հր.,** նշվ. աշխ., էջ 282): Հմմտ. նաև Մեղրու բարբառում երրորդ խոնարհման բայերի թեքված ձևերը. *սիրիս իմ, սիրիս իս, սիրիս ի ...* (ներկա), սիրիս իմ լա... (անցյալ անկատար), սէրիլ իմ, սէրիլ իս, սէրիլ ի ... (ապառնի), սէրիլ իմ լա ... (անցյալ ապառնի) (**Աղայան Էդ.**, Մեղրու բարբառը, էջ 206-208: Տե՛ս նաև **Ղարիբյան Ա.**, Հայ բարբառագիտություն, էջ 366):

[10] Հմմտ. ու խոնարհման բայերի կատարյալի ձևերը Մարաղայի բարբառում. ուզեմ – *իւզում, իւզունք, իւզուք, իւզուն* (**Աճառյան Հր.,** նշվ. աշխ., էջ 282):

ա) Հոլովման և խոնարհման կարգերում դիտարկվող ձայնավորների ներդաշնակության երևույթը հաստատում է, որ գրաբարը պահպանում է հնդեվրոպական լեզուներին հատուկ հնչյունափոխական այդ օրենքը:

բ) ՈՒ ձայնավորի ներդաշնակության օրենքը գործառապես լայն դրսևորումներ ունի գրաբարում գոյականի թվակազմության համակարգում, որ պայմանավորված է այդ ձայնավորի գագաթնային դիրքում հանդես գալու և ուժեղ բնույթ ունենալու հանգամանքով:

գ) Հոլովի քերականական կարգում ա և ի ձայնավորների ներդաշնակության օրենքը վիճակագրորեն սահմանափակ դրսևորումներ ունի, թեև եղած փաստերը իրավունք են տալիս խոսելու նախագրային հայերենում դրա ծավալային այլ իրացումների մասին:

դ) Բայի խոնարհման կարգում ձայնավորների ներդաշնակության օրենքը գործում է ստորադասական եղանակի առաջին ապառնի ժամանակում՝ ի և ու լծորդական ձայնավորների ազդեցության ոլորտներում:

СИНГАРМОНИЗМ ГЛАСНЫХ В ГРАБАРЕ

ХАЧАТРЯН Л. М.

Резюме

Сингармонизм гласных – это то фонетическое явление, при котором гласные грамматических частиц совпадают с гласным последнего слога корня или слова. Это дистактная ассимиляция аффиксальных гласных корневым.

Фонетические примеры из грабара явствуют о том, что на данном этапе развития языка наблюдается сингармонизм гласных в грамматических категориях существительного и глагола. Сингармонизм гласных *ու, ա, ի* наличествует в грамматической категории числа существительного. Сингармонизм гласного *ու* встречается в таких словах, которые в единственном числе заканчиваются суффиксом *–ումն,* а во множественном числе имеют окончание *–մունք.* Следовательно, те слова, которые оканчиваются на слоговую гласную *ի,* во множественном числе получают окончание *–ՅԷщ,* а слова с гласным і получают окончания *-ական, էար, նէար* и т. д.

В категориях глагола сингармонизм гласных *Յ* и *ցх* наблюдается в некоторых формах будущего времени сослагательного наклонения. Сингармонизм гласных имеет место во многих диалектах армянского языка.